ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ N 1/5

10 հոկտեմբերի 2018 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը *որոշում է*.

1. Ուժը կորցրած ճանաչել «Երևանի պետական համալսարանի ներքին կարգապահական կանոնների» (այսուհետ՝ կանոններ) (ընդունված ԵՊՀ գիտական խորհրդի 2015թ. մարտի 26-ի նիստում) 9-րդ կետի 1-ին ենթակետը:

2. Կանոնների 14-րդ կետի վերջին պարբերությունում «կադրերի բաժնի» բառերը փոխարինել «անձնակազմի կառավարման բաժնի» բառերով:

3. Կանոնների 35-36-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«35. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս), աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 32 ժամ ընդհանուր տևողությամբ:

ԵՊՀ գիտական աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 20 ժամ ընդհանուր տևողությամբ:

ԵՊՀ մյուս աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 36 ժամ ընդհանուր տևողությամբ:

36. ԵՊՀ գիտամանկավարժական համակազմի և գիտական աշխատողների աշխատաժամանակը սահմանվում է 9.15-ից 21.00-ի սահմաններում՝ պահպանելով օրվա ծանրաբեռնվածությունը:

ԵՊՀ մյուս աշխատողների աշխատանքային օրվա սկիզբը երկուշաբթիից հինգշաբթի օրերին սահմանվում է 9.15-ին, ավարտը՝ 17.00-ին, իսկ ուրբաթ աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է 9.15-ին, ավարտը՝ 16.45-ին: Ընդմիջումը սահմանվում է՝ 13.00-ից 13.30-ն ընկած ժամանակահատվածում: Աշխատանքի բնույթից ելնելով՝ յուրաքանչյուր ստորաբաժանում կարող է փոփոխել ընդմիջման ժամը:

Աշխատանքային անհրաժեշտությամբ պայմանավորված՝ յուրաքանչյուր ստորաբաժանում, ԵՊՀ ռեկտորի թույլտվությամբ կարող է փոփոխել իր ստորաբաժանման աշխատանքային ժամերը 9.15-ից 21.00-ի սահմաններում՝ պահպանելով օրվա ծանրաբեռնվածությունը:»:

4. Կանոնների 68-րդ կետից հանել «Դասաժամը, դասամիջոցը սկսվում և ավարտվում են բարձրաձայն հնչող զանգի ղողանջով» նախադասությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ